ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԻԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Սարիգյուղ համայնք
sarigyugh.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019թվականի N 82-Ա

ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով, ավագանին որոշում է՝

1.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԻԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2.ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԻԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՍԱՏՐՅԱՆ ԿԱՐԻՆԵ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԼՅՈՎԱ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՄԵՍՐՈՊ

ՌԵՎԱԶՅԱՆ ԼՈՒԻԶԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՅՐԱՆ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԻԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Սարիգյուղ համայնք
sarigyugh.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019թվականի N 83-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԻԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 18-րդ ,19-րդ ենթակետերով և <Տեղական տուրքերի և վճարների մասին>Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ,9-րդ ,10-րդ ,11-րդ , 12-րդ և 14-րդ հոդվածների պահանջներով,ավագանին որոշում է՝

Սահմանել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Սարիգյուղ համայնքի վարչական տարածքում 2020 թվականի տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի,շինությունների/ներառյալ ոչ հիմնական շինարարության/ տեղադրման թույլտվության համար տեղական տուրք սահմանել՝

Հիմնական օբյեկտների համար.
1/Մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի,այդ թվում այգեգործական/ամառանոցային /տների,ինչպես նաև մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 5000 /հինգ հազար/ դրամ:

2/ Մինչև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1000/հազար/ դրամ:
3/20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500/հազար հինգ հարյուր/ դրամ:

2.Համայնքի վարչական տարածքում շենքերի,շինությունների,քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար՝
1500/հազար հինգ հարյուր/ դրամ:

3.Համայնքի տարածքում տեղական տուրք սահմանել՝

1/Ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակը՝ 1500/հազար հինգ հարյուր /դրամ:
- <26-ից մինչև 50քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000/երեք հազար/ դրամ:
- 50-ից մինչև 100քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 4500/չորս հազար հինգ հարյուր/ դրամ:

Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 1500/հազար հինգ հարյուր /դրամ:
- 26-ից մինչև 50 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 3000/երեք հազար/դրամ:
- 50-ից մինչև 100 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 4500/չորս հազար հինգ հարյուր/դրամ:

<Համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրք յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

- մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար եռմսյակում 1500/հազար հինգ հարյուր /դրամ:
- 26-ից մինչև 50 քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյկտի համար եռամսյակում 3000/երեք հազար/ դրամ:

4.Համայնքի տարածքում տեղական տուրք սահմանել.

1/ հեղուկ վառելիքի,սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

150 000/հարյուր հիսուն հազար/ դրամ:

2/Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար՝ 1 քմ –ի համար՝ 1500/հազար հինգ հարյուր/ դրամ:

5.Տեղական վճարների տեսակները.

1/Համայնքի տարածքում շինարարության կամ արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու ու հաստատելու,ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 1000/հազար/դրամ:

2/Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, ետ վերցնելու և վարձակալությամբտրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 500/հինգ հարյուր/դրամ:

3/Համայնքի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար՝ 2000/երկու հազար/ դրամ:

6.Աղբահանության համար.
1/ Մեկ շնչին ընկնող վարձավճարի չափը սահմանել ամսեկան 100/հարյուր/դրամ:

2/Համայնքի վարչական տարածքում առևտրի,հանրային սննդի օբյեկտների, իրավաբանական անձանց 1քմ-ի համար սահմանել ամսեկան 35 դրամ:

3/Համայնքի վարչական տարածքում արտադրական օբյեկտների,իրավաբանական անձանց 1քմ-ի համար սահմանել ամսեկան 6 դրամ:

4/Համայնքի վարչական տարածքում կրթական օջախների իրավաբանական անձանց 1քմ-ի համար ասահմանել 3 դրամ:
7.Ծնողական գանձումներ.

1/Մանկապարտեզ հաճախող մեկ երեխայի վարձավճարը սահմանել ամսեկան 4000/չորս հազար/ դրամ:

8.Ուժը կորցրած ճանաչել Սարիգյուղ համայնքի ավագանու 2018թվականի դեկտեմբերի 7-ի <Սարիգյուղ համայնքի տարածքում 2019թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին> թիվ 66- Ն որոշումը:

9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող 10-րդ օրը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՍԱՏՐՅԱՆ ԿԱՐԻՆԵ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԼՅՈՎԱ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՄԵՍՐՈՊ

ՌԵՎԱԶՅԱՆ ԼՈՒԻԶԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԵՅՐԱՆ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԻԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Սարիգյուղ համայնք
sarigyugh.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019թվականի N 84-Ն

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԻԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 11-րդ ենթակետով,համայնքի ավագանին որոշում է՝

1.Սարիգյուղ համայնքի ղեկավարի 2020թվակնի վարձատրության չափը սահմանել 220000/երկու հարյուր քսան հազար/դրամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող 10-րդ օրը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՍԱՏՐՅԱՆ ԿԱՐԻՆԵ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԼՅՈՎԱ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՄԵՍՐՈՊ

ՌԵՎԱԶՅԱՆ ԼՈՒԻԶԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՅՐԱՆ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ